

դեպիև ի մէջ գերութեան Երուսաղէմի, առաքելական աթոռոյս արգ՝ ցանկացող եղեալ այսմ գեղեցիկ աստուածային տառիցս. ճգնաւոր ոմն՝ անուն Յովհաննէս. հանդերձ քեռք իւրով կրաւնաւոր կարգաւ. և բարի անուն ստացեալ՝ յանձինս իւրեանց ունել զվանս արտաքու Երուսաղէմի, հանդէպ Սուրբ Սիոնի ի վերայ ճանապարհին Բեթղեհէմի. որ է լեալ հսկըզսարսն Ս. Աստուածածինն, մինչ գայր յընծայումն ի տաճարն աստուածացեալ մանկամբն Յիսուսիւ Քրիստոսիւ, վասն այսորիկ բարի անուն և ընտրեալ քահանայն Կէորգ կանգնեաց զտաճարն սուրբ և անուանեաց յանուն սուրբ Աստուածածնի, յիշատակ նորա օրհնութեամբ. նմանապէս եղբորորդի իւր Յովհաննէս, զոր վերագոյն յիշեցաք՝ ընկալաւ զսա բարեաց յիշատակ և բարեխօս առ Աստուած՝ իւրեանց և ծնողաց իւրեանց և աւանդեցին ի Ս. Աստուածածին գանձ անկողոպտելի, ի վայելումն շնորհազարգ օրգւոյ իւրեանց Գրիգորոյ սարկաւազի և այլ կրաւնաւորաց և քահանայից:

Արգ աղաչեմք զամենեանն՝ որք ուկտիք ի սմանէ ընթերցմամբ կամ զաղափոր առնելով, սրտի մտօք յիշատակեսլիք զստացողք սորա զՅովհաննէս և զքեռ իւր զՏիկնեբես. և զժառանգաւոր նոցունց Գրիգոր սարկաւազ. և զԿէորգն զզընացեալն առ Քրիստոս. և զվերջին աշխատողս և զզծողս և զկապողս Յովան՝ զվերջացեալս յամենայն բարեաց և խոշորութեանս (գրոյս) անմեղադիր (լեր)ութեամբ» (Մրգս. Յուց. Բ. հատ. էջ 144. Թ. 1553). նաև մեր յօդուածը (Սիոն. 1927, էջ 109—112):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲ.— Մբ. 1386ին Լեոնակողման Հայոց Ս. Կարապետ վանքին կը նուիրէ ձեռագիր մը (ՄԶ. Թ. 89), ինչպէս յայտնի կ'ըլլայ սա յիշատակարանէն. « . . . յիշեսլիք զվերջին զստացաւո սորայ զՅովանէս արեղայս. որ զգիրքս զընեցի ի տէր Գրիգորէ որ ի Սսէ. և զարձեալ տուի ի Լեոնակողմն ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց ի Թուին ՊԼԵ» (= 1386): (Տե՛ս Սիոն, 1927, էջ 263—267, մեր յօդուածը):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲ.— Մբ. 1448ին, Լեոնակողման հայոց Ս. Կարապետի վանքին մէջ կը կազմէ Յայնաւուրի մը (ՄԶ. Թ. 1822) և կը գրէ. «կազմեցաւ այսմաւուրքս Լեոնակողման վանսն